

ԶՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻՒ ԲԱՂԱՍԱՐՅԱՆ, տ.գ.թ., դոցենտ

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող**

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԳՆԱՐԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՉ

Հարկային բեռք և դրա օպտիմալացման խնդիրը ցանկացած էրկրի տնտեսական քաղաքականության գերակայություններից է: Ըստ որում, այս ուղղությամբ իրականացված բոլոր միջոցները կապված են պետական բյուջեում հարկային եկամուտների ապահովման ծախսերի օպտիմալ բաշխման հետ: Պետական բյուջեի հիմնական եկամուտ հանդիսացող հարկերի հետ մեկտեղ պետական ծախսերը հանդես են զայիս որպես պետության կողմից տնտեսության զարգացման վրա ներազդող գործիք: Պետական ծախսերի համակարգի միջոցով տեղի է ունենում ազգային եկամտի էական մասի վերաբաշխում պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության իրականացման համար¹:

Հարկային բեռքի օպտիմալացման առումով տրվել են տարբեր գնահատականներ: Օրինակ, Լի Ջի հեղինակը ուսումնասիրել է, թե հարկաբյուջետային քաղաքականությունը որքան արդյունավետ է արձագանքում «երկրորդային ճգնաժամի» շրջանում², և դա ինչպես է ազդում գործարար միջավայրի և տնտեսության զարգացման վրա: Ուայթի կողմից առաջարկված մոտեցումն օգտագործելով՝ հեղինակի կողից առանձնացվել է «երկրորդային ճգնաժամի» 57 դրվագներ³: Մեկ այլ հեղինակի՝ Կիմ Դոնգի կողմից առաջարկված մեթոդներին հետևելով⁴՝ Լի Ջին բացահայտել է «երկրորդային ճգնաժամի» տևողությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը չի ազդում «երկրորդային ճգնաժամի» կրծատման վրա, քանի որ երկարաժամկետ հատվածում հարկային քաղաքականության դիրեկտիվ մեթոդների կիրառման դեպքում տնտեսությունը չի զարգանում և այն բերում է գործարար ակտիվության անկմանը⁵:

Մեկ այլ հեղինակի՝ Ժու Խոնդոքը գնահատել է հարկային բեռք և հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման գործում՝ կիրառելով ստոխաստիկ տարրեր մոդելներ և մեթոդներ⁶:

Զարին և ուրիշներ հարկային քաղաքականության և բիզնես գործընթացների մոդելների փոխադարձ կապն ուսումնասիրելով հիմնավորել են, որ հարկային քաղաքականությունն է բերում բիզնեսի արդյունավետության բարձրացմանը⁷:

Ֆոգել Լուկաս, Ռուեգեր Վերներ, Խերգ Բեյրիսարդը⁸ վերանայելով ընդհանուր հավասարակշռության միջակայքային դինամիկ մոդելի կանխավարկածը, հարկային համակարգին բնորոշ տնտեսական օրինաչափություններին համաձայն հիմնավորել են, որ տնտեսության զարգացման վրա ազդում են ոչ միայն պետական ծախսերը, տրանսֆերտները, սպառման ծախսերը, աշխատուժն ու կապիտալը, այլև շատ կարևոր է հարկային համակարգի դերը վերջինիս զարգացման գործում:

Հանսենի, Լարսի, Թոմասի աշխատանքներում արտացոլվում է սահմանափակ և օպտիմալացվող տնային տնտեսությունների նկատմամբ հարկաբյուջետային քաղաքականության դրական ազդեցությունը, ըստ որի՝ մի խմբի հարստության մեծացումը, որպես կանոն, նվազեց-

¹ Мельников В.Д. Финансы.- А.: Экономика, 2011. – 603с.

² Li Jie, The effectiveness of fiscal and monetary policy responses to twin crisis // Applied – 2013. - №45 (27). –pp. 3904-3913.

³ Lieven Baele, Pilar Soriano The Determinants of Increasing Equity Market Comovement: Economic or Financial Integration, pp-3-31

⁴ Kim, Dong Heon, What is an oil shock? Panel data evidence // Empirical – 2012. – № 43 (1). – pp. 121-143.

⁵ White, H. A Heteroscedasticity-Consistent Covariance Matrix Estimator and a Direct Test for Heteroscedasticity // Econometrica. – 1980. – № 48 (4). – pp. 817-838.

⁶ Zhu, Xiaodong. 1992. Optimal fiscal policy in a stochastic growth model. Journal of Economic Theory 58 (2):250–289.

⁷ Chari, V.V., Lawrence J. Christiano, and Patrick J. Kehoe. 1994. Optimal Fiscal Policy in a Business Cycle Model. Journal of Political Economy 102 (4):617–652

⁸ Vogel Lukas, Roeger Werner, Herz, Bernhard The Performance of Simple Fiscal Policy Rules in Monetary Union // Open Economies Review. – 2013. – № 24 (1), SI. – pp. 165-196.

նում է մեկ այլ խմբի հարստությունը¹: Հարկային համակարգում առկա թերություններն ու բացրդումները բերում են հարկային բերի անհավասարաշափ բաշխմանը, իսկ դրա բարձրացումը նպաստում է նրան, որ բնակչության հարստության չափավոր միջին աճը հակադրված է ոչ օպտիմալ վարած քաղաքականության ժամանակ բնակչության հարստության կորուստներին²:

Անաստաշի Կարանտունիսի «Հորեստեսական սպասումների կառավարումը և հարկաբյուջետային քաղաքականությունը» աշխատությունում³ ուսումնասիրվել է օպտիմալ հարկային քաղաքականությունը, համաձայն որի կառավարությունը բախվում է հորեստեսական սպասումները ձևավորող հասարակության վախի հետ, եթե տեղի է ունենում պլանավորված պետական ծախսերի կրծատում կամ պետական բյուջեի սեկվեստոր: Տեղինակը առանձնացրել է երկու դրույթներ, որոնք ձևավորել են վերջնական արդյունքները: Մի կողմից, կառավարությունն անհավանական հորեստեսական իրավիճակների հարկային աղավաղումների համակենտրոնացման շարժադրիթ է ունեցել, մյուս կողմից՝ հասարակության ներքին սպասումները դրդել են սպասումների կառավարման նոր շարժադրիթներին⁴:

Սուլիզին «Քեյնսականությունն ու հանրային կառավարումը»⁵ աշխատությունում նույնպես առաջնային է համարել հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման, պետական կարգավորման գործիքակազմի կիրառման դեպքում:

Հետևաբար, ամփոփելով տարրեր հեղինակների հարկային քաղաքական գնահատման մոտեցումները, կարելի է եզրակացնել, որ քանի դեռ չի լուծվել հարկային համակարգի արդյունավետության բարձրացման խնդիրը, միանշանակ լիարժեք չենք կարող գնահատել դրա գործարար միջավայրի վրա: Այդ խնդրի լուծումը ենթադրում է տարրեր մոտեցումներ, որոնց մեջ, մասնավորապես, կարելի է նշել խնդրի լուծման «որակյալ» մեթոդը: Այն կայանում է ամբողջ հարկային օրենսդրության կառավարման և կատարելագործման մեջ: Կարելի է գնահատել հարկային քաղաքականության արդյունավետությունը տարրեր տեսանկյուններից, հատկապես տնտեսվարող սուբյեկտի և պետության առումով: Պետության հարկային քաղաքականության արդյունավետության գնահատումը ֆիզիկական և իրավաբանական տեսանկյունից գիտական հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ այստեղ գործում են ուղիղ և պարզ տրամաբանություն որքան շատ հարկային հավաքագրում, այնքան վատ: Պետության տեսանկյունից հարկային բերի գնահատման ժամանակ հնարավոր են վերլուծության երկու չափորոշիչներ:

- հարկային բերի արդյունավետության գնահատում, որն ազդում է տնտեսական համակարգի և գործարար ակտիվության, ուղղակի և անուղղակի հարկերի օպտիմալ հարաբերակցության վրա,
- հարկային բերի արդյունավետության գնահատում, պետական բյուջեում հարկային եկամուտների ավելացման վրա:

Որպես կանոն, այդ երկու գնահատականները հակադիր են, և ըստ առաջին չափորոշիչի, արդյունավետ հարկային քաղաքականությունը կարող է լինել ընդհանրապես ոչ արդյունավետ, իսկ ըստ երկրորդ չափորոշիչի՝ արդյունավետ: Բացի այդ, նույնիսկ միևնույն չափորոշիչի շրջանակում հարկային քաղաքականությունը չի կարող ունենալ միանշանակ արդյունք, այսինքն՝ տնտեսական գործնթացների ժամանակ կարող են առաջանալ բիզնեսի, պետության և հասարակության շահերի բախումներ և առաջացնել տնտեսական աղավաղումներ:

Տնտեսության զարգացման, հարկային բերի, հարկային եկամուտների անուղղակի կապն ու դրա օպտիմալ հարաբերակցությունը ենթադրում է, որ անհրաժեշտ է իրականացնել հարկային համակարգում բարեփոխումներ: Որպես կանոն, այդ կապը, ի սկզբանե, ցույց է տրվել հարկային տնտեսագիտությունում հայտնի Լաֆֆերի կողի միջոցով, որում Փունկցիոնալ կախվածություն գոյություն ունի պետության հարկային եկամուտների և հարկային բերի մակարդակի միջև:

¹ Hansen, Lars Peter, Thomas Sargent, and Thomas Tallarini. 1999. Robust Permanent Income and Pricing. Review of Economic Studies 66:873–907.

² Vogel Lukas, Roeger Werner, Herz, Bernhard The Performance of Simple Fiscal Policy Rules in Monetary Union//Open Economies Review.-2013.-№24(1), Sl.-pp. 165-196.

³ Anastasios Karantounias , Managing pessimistic expectations and fiscal policy // Theoretical Economics. – 2013. – № 8 (1). – pp. 193-231.

⁴ Karantounias Anastasios, Managing pessimistic expectations and fiscal policy//Theoretical Economics.-2013.-№8 (1).-pp. 193-231.

⁵ Sweezy, A. (1972) The Keynesians and Government Policy, 1933–1939, American Economic Review, 62, 2, 116–124.

Նշենք, որ Լաֆֆերի կորի հասկացությունը գտնվում է հարկային կարգավորման տեսության կենտրոնական տեղում: Ըստ որում, հստակ ուսումնասիրությունները կատարվում են երկու ուղղությամբ,

1. Առաջինը ենթադրում է արտադրական և հարկային գործնթացների մոդելավորում և Լաֆֆերի պարաբոլային կախվածությունից մշակված ձևաչափերից տեսական դուրսթերում, այսինքն՝ շեշտը դրվում է, այսպես ասած, «հրակային կորի բեկման էֆեկտի» և դրա առաջացման պայմանների հայտնաբերման վրա:
2. Երկրորդ ուղղությունը կապված է առանձին երկրների համար, այսպես կոչված, Լաֆֆերի կետերի մեծությունների հաշվարկման հետ: Այս դեպքում տնտեսական համակարգի ֆունկցիոնալ առանձնահատկություններն իրենց տեղը զիջում են կոնկրետ վիճակագրական տվյալներին և ալգորիթմներին¹: Մի շարք դեպքերում տեսական ձևաչափերի մշակումը զուգակցվում է էմպիրիկ հաշվարկների հետ, որն ապահովում է առաջին և երկրորդ մոտեցումների միավորումը: Այսպիսի դեպքերը շատ քիչ են և ունեն ցածր արդյունավետություն:

Այդ երկու ուղղությունների շրջանակներում գոյություն ունեն խնդրի վերլուծության մոտեցման տարբերություններ: Պայմանականորեն դրանց կարելի է բաժանել երկու խմբերի.

- առաջին խմբում, որպես կանոն, մշակվում է համակարգի նկարագրական միկրոտնտեսական մոտեցումը², և պայմանականորեն վերցրած մեկ տնտեսվարող սուբյեկտի համար հաշվարկված արդյունքները «պիլոտային մոտեցմամբ» տարածվում են բոլոր տնտեսվարող սուբյեկտների վրա այնքան ժամանակ, մինչև կատարվող վերլուծությունը կհասնի իր ընդհանրական մակարդակին,
- երկրորդ խմբում կիրառվում է սկզբունքային ամփոփ կառուցվածք³, ինչը թույլ է տալիս կատարել մակրո ընդհանրացումներ:

Վերջին շրջանում ուսումնասիրություններ են կատարվել, որոնցում առանձնացվել են տարրեր գնահատականներ հարկային համակարգի առանձին կողմերի արդյունավետության տեսանկյունից՝ շեշտադրում կատարելով դրանց ազրեցությանը գործարար միջավայրի բարելավման վրա⁴: Այդ ուսումնասիրություններում, հատկապես, առանձնացվում են հարկային համակարգի արդյունավետության բարձրացման միջոցով տնտեսությունում ստեղծված ավելացրած արժեքը ինչ մուլտիպլիկատիվ արդյունք է տալիս տնտեսական բարձրականության արդյունավետության, հասարակության բարեկեցության բարձրացման վրա: Օրինակ, ավելացված արժեքի հարկը, շահութահարկը, եկամտահարկը, գույքահարկը ինչպես կարող են ազդել գործարար միջավայրի բարելավման, տնտեսությունում ավելացրած արժեքի ստեղծման, տնտեսության ոլորտներում եկամտաբերության բարձրացման վրա: Դրա հետ մեկտեղ Լաֆֆերի կորի

¹ Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4, Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка //Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала //Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

² Соколовский Л.Е. Подоходный налог и экономическое поведение // Экономика и математические методы. 1989. Т. 25. Вып. 4, Аркин В., Сластников А., Шевцова Э. Налоговое стимулирование инвестиционных проектов в российской экономике. М.: РПЭИ/Фонд Евразия. 1999, Капитоненко В.В. Инфляционный сдвиг налоговой ставки на кривой Лаффера // Экономика и технология: межвузовский сборник научных трудов. М.: РЭА, 1994, Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4.

³ Мовшович С.М., Соколовский Л.Е. Выпуск, налоги и кривая Лаффера // Экономика и математические методы. 1994. Т. 30. Вып. 3, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка //Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала //Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

⁴ Соколовский Л.Е. Подоходный налог и экономическое поведение // Экономика и математические методы. 1989. Т. 25. Вып. 4, Мовшович С.М., Соколовский Л.Е. Выпуск, налоги и кривая Лаффера // Экономика и математические методы. 1994. Т. 30. Вып. 3, Аркин В., Сластников А., Шевцова Э. Налоговое стимулирование инвестиционных проектов в российской экономике. М.: РПЭИ/Фонд Евразия. 1999, Капитоненко В.В. Инфляционный сдвиг налоговой ставки на кривой Лаффера // Экономика и технология: межвузовский сборник научных трудов. М.: РЭА, 1994, Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4, Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка //Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала //Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

հասկացությունը, ի սկզբանե, ստեղծվել է ընդհանուր հարկային բեռի օպտիմալացման համար, այսինքն՝ Լաֆֆերի կորի վրա գտնել կետեր հարկային բեռի միջին ցուցանիշի համար: Վերջինս պետք է ընկալել որպես ՀՆԱ-ում պետական բյուջեի հարկային մուտքերի մաս:

Այդ առումով, մշակվել են տարրեր տնտեսաշափական մոդելներ և ձևաչափեր, որոնք այս կամ այն կերպ որոշել են, թե Լաֆֆերի կորի վրա որն է այն օպտիմալ կետը, որը կարող է բերել հարկային եկամուտների ապահովմանը և տնտեսության զարգացմանը: Այդ խնդրի լուծման համար ներկայացնենք այն վարկածը, որ ՀՆԱ-ում արտադրության ծավալը կախված է հարկային բերից՝

$$\theta = \frac{T}{X}^1$$

որտեղ՝

T - բյուջեում հարկային մուտքերի գումարն է:

(θ) կախվածությունը մոտարկվում է անուղղակի ֆունկցիայով, որի պարամետրերը են-թարկվում են քանակական գնահատման: $X(\theta)$ ֆունկցիայի նույնականացումը թույլ կտա հաշվարկել Լաֆֆերի կետերը:

Լաֆֆերի կորի առաջին կետը պայմանականորեն նշանակենք θ^* տառով, որի դեպքում արտադրական կորը հասնում է իր $X = X(\theta)$ առավելագույն արժեքի այն ժամանակ, երբ տեղի է են ունենում հետևյալ պայմանները՝ $\partial X(\theta^*)/\partial\theta = 0, \partial^2 X(\theta^*)/\partial\theta^2 < 0$

Լաֆֆերի երկրորդ կետը պայմանականորեն նշանակենք θ^{**} , որի դեպքում այսպես ասած, «հարկային կորը»՝ $T = T(\theta)$ հասնում է իր առավելագույն արժեքի այն ժամանակ, եթե տեղի ունենում հետևյալ՝ $\partial T(\theta^*)/\partial\theta = 0, \partial^2 T(\theta^*)/\partial\theta^2 < 0$:

Կարելի է ասել, որ Լաֆֆերի առաջին կետը տնտեսական առումով նշանակում է հարկային բեռի այն սահմանը, որի ընթացքում արտադրական համակարգը չի անցնում անկման շրջան: Լաֆֆերի երկրորդ կետը ցույց է տալիս հարկային բեռի այն մեծությունը, որի շրջանակից դուրս հարկային մուտքերի ծավալի մեծացումը հնարավոր չէ:

Ընդհանուր առմամբ դրված խնդիրը կարելի է լուծել տնտեսաշափական մեթոդների միջոցով, որոնց հիմքում ընկած է այն դրույթը, որ արտադրության ծավալը ոչ ուղղակիորեն է կախված հարկային բերից: Այդ դեպքում, ՀՆԱ-ի ծավալը բավական է մոտարկել հետևյալ բազմանդամային ռեգրեսիայի միջոցով՝

$$X = \sum_{i=0}^m \beta_i \theta^i, \quad (1)$$

որտեղ՝

β_i - հետադարձ դինամիկ շարքերի հիման վրա վիճակագրական գնահատման ենթակա պարամետրն է:

Հաշվի առնելով բանաձևը և հարկերի ծավալների մեծությունը՝

$$T = \theta X, \quad (2)$$

կարելի գրել հետևյալ հարաբերակցությունը՝

$$T = \beta_0 \theta + \sum_{i=1}^m \beta_i \theta^{i+1}; \quad (3)$$

Այս ուսումնասիրությունը կատարելու համար պետք է ներկայացնել երկու «սկզբնական» ցուցանիշները՝ T և X դինամիկ շարքերի տեսքով: Իմանալով այդ երկու մեծությունները՝ ըստ բանաձևի (2)-ի կարելի հաշվարկել երկրորդային ցուցանիշը՝ $\theta - 1$, հետագայում հետազոտությունների արդյունքում որոնվում է համապատասխան մակարդակի բազմանդամ (1): Ցանկալի է, որ այն լինի քառակուսային կամ խորանարդային ֆունկցիայի, քանի որ բազմանդամի ավելի բարձր կարգը կարող է խոչընդունել Լաֆֆերի կետի որոնմանը:

Բանաձև (1)-ը ունի մի շարք առանձնահատկություններ: Նախ, β_i պարամետրերի ստաց-

¹ Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11.

ման համար անհրաժեշտ է ունենալ վիճակագրական առումով «երկար» ու «լավ» դինամիկ շարքեր: Երկրորդ, *β_i* պարամետրերը անբնադիատ են ժամանակի մեջ, ինչը բերում է Լաֆֆերի կետերի կայունության: Դա այդքան էլ իրատեսական չի կարող ներկայացնել տնտեսական իրավիճակը և դրանում տեղի ունեցող փոփոխությունները, քանի որ ավելի ճիշտ կիխներ ենթադրել, որ Լաֆֆերի կետերը հանդիսանում են ժամանակի մեջ «լողացող» մեծություններ:

Անդրադառնալով հարկային բերի օպտիմալացման խնդրին, հարկ ենք համարում վերլուծել ՀՀ հարկային համակարգն ու հարկային օրենսդրությունը, իսկ հետո միայն պարզել, թե դրանք ինչպես են ազդում գործարար միջավայրի վրա:

ՀՀ հարկային համակարգն անցել է ձևավորման՝ ավելի քան երկու տասնամյակ ընդգրկող ժամանակահատված, և թեև այդ ընթացքում առանձին օրենսդրական փոփոխություններով մշտական լուծվել են հարկային համակարգի կատարելավորման, մրցունակության բարձրացման, ազգային տնտեսության գործարար միջավայրի բարելավման ու պետական բյուջեի համար անհրաժեշտ հարկային եկամուտների ապահովման խնդիրները, այդուհանդերձ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա միտումները, նոր մարտահրավերները, տարածաշրջանային զարգացումներն ու տնտեսական միությունների շրջանակներում ընթացող ինտեգրացիոն գործընթացները հարկային հարաբերությունները նորովի կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել: Այս իմաստով, հարկային օրենսգիրքը կարևորվում է տնտեսության ակտիվացման, գործարար միջավայրի հետագա բարելավման ու օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում, ինչի արդյունքում հնարավոր է ապահովել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ: Շատ կարևոր է նաև այն, որ հարկային օրենսգրքի առկայությունը խոսում է առավել կայացած, կայուն և կանխատեսելի հարկային համակարգի ու հարկային միջավայրի մասին: Հետևաբար, հարկային օրենսգրքի առկայությունը նաև կարևոր ու դրական ազդակ է ՀՀ տնտեսության ինտեգրման արդի մարտահրավերներին, ինչպիսին է ԵԱՏՄ, տարածաշրջանային երկրների հետ նոր ձևաչափի, ներդրողների ու միջազգային գործընկեր կազմակերպությունների համար:

ՀՀ հարկային օրենսգրքի հիմքում ընկած են հարկային քաղաքականության հիմնարար տարրերը, ինչպիսիք են՝ հարկման դրույքաչափերը, հարկման բազաները, հարկային արտոնությունները և հարկի հաշվարկման ու վճարման կարգին վերաբերող հետևյալ հիմնական մոտեցումները: Բացի այդ, կարևորվել է հարկման այնպիսի դրույքաչափերի կիրառությունը, որոնք մի կողմից չեզոք ազդեցություն կարող են ունենալ հարկային միջավայրի վրա, մյուս կողմից հնարավորություն են տալիս տնտեսության տարբեր ոլորտների, տարբեր չափերի, ինչպես նաև հարկման տարբեր համակարգերում գտնվող հարկ վճարողների համար սահմանել հավասարակշռված և տնտեսապես հիմնավորված հարկային բեռ:


Վերլուծելով գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցության խնդիրները, հարկ ենք համարում անդրադառնալ հարկային օրենսգրքի հիմքում ընկած հարկման բազաների որոշման սկզբունքների ու կանոնների վերանայմանը: Վերջինս հնարավորություն կը լնանարի մի կողմից ամրապնդել հարկման արդարության սկզբունքները, ինչը կդրսենորվի հարկման բազաների որոշման սկզբունքների միասնականացմամբ, մյուս կողմից սահմանել առավել հիմնավորված հարկման բազաներ, ինչը կդրսենորվի հարկման բազան արհեստականորեն մեծացնող և տնտեսագիտական որևէ հիմնավորում չունեցող սահմանափակումների վերացմամբ: Արդյունքում հիմնական հարկատեսակների գծով հարկման բազաները կճշգրտվեն՝ դրանով իսկ ամրապնդելով հարկման արդարացիության սկզբունքը:

Հարկային օրենսգրքի հիմնական օրենքների վերլուծության արդյունքում պարզվել է, որ վերջինիս հիմքում ընկած է հարկերի հաշվարկման և վճարման կարգի պարզեցումն ու ազատականացումը: Խոսքը վերաբերում է ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հաշվանցումների կատարման և դեբետային մնացորդների օգտագործման կարգի ազատականացմանը (տնտեսագիտական հիմնավորում չունեցող սահմանափակումների վերացմամբ), ներդրումային նշանակություն ունեցող ապրանքների ներմուծման համար ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետների երկարացմանը, շահութահարկի գծով կանխավճարների հաշվարկման համակարգի ազատականացմանը, շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով մի շարք նորմավորվող ծախսերի (հատկապես ապրանքների արտահանման, արտաքին շուկաներում

գովազդի ու մարքեթինգի իրականացման, կաղըերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ կատարվող) համար նախատեսված նորմաների վերացմամբ, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկային մարմիններին հաշվետվությունների ներկայացման պարբերականության կրճատմամբ և այլն:

Կատարված վերլուծության արդյունքների հիման վրա կարող ենք հիմնավորել, որ ՀՀ-ում հարկային համակարգում առկա խնդիրների լուծման և, այսպես ասած, «անթերի հարկային քաղաքականություն» իրականացնելու համար պետք է գործի հետևյալ պայմանը $\theta^* > \theta$:

Այդ առումով, անհրաժեշտ է հաշվարկել առանձին հարկատեսակների բեռի ազդեցությունը հարկային համակարգի կայունության վրա, մասնավորապես, առանձնացվել են պետական բյուջե հավաքագրող ուղղակի հարկային բեռի (շահութահարկ/ՀՆԱ և եկամտային հարկ/ՀՆԱ) և անուղղակի հարկային բեռի (ակցիզային հարկ/ՀՆԱ և ԱԱՀ/ՀՆԱ) ցուցանիշները: Այսպես, 2001-2015թթ. հիմնական հարկատեսակների հարկային բեռը աճի և նվազման տարրեր միտումներ, սակայն միջինը ուղղակի հարկերի բեռը շահութահարկի և եկամտային հարկի մասով կազմել են համապատասխանարար՝ 2,16% և 2,42%, աճել է, իսկ անուղղակի հարկերի բեռը՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով կազմել է համապատասխանարար՝ 7,85% և 1,57% (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. 2001-2015թթ. հիմնական հարկատեսակների հարկային բեռը, %.¹

Հատկանշական է նաև այն, որ ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են տարրեր մակարդակների իրավական ակտերով (ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, հարկային մարմնի իրամաններ և այլն): Արդյունքում, մի կողմից նկատելիորեն բարդացել է հարկային հարաբերություններ կարգավորող օրենսդրությունից օգտվելը, մյուս կողմից հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի այս տարանջատվածությունն ու բազմազանությունը ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, երբ միևնույն նշանակությունն ունեցող հասկացությունները տարրեր իրավական ակտերում կիրառվում են տարրեր եզրույթներով, երբ միատեսակ հարկային հարաբերությունները կարգավորվում են տարրեր սկզբունքներով ու կանոններով: Այս առումով, ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ հնարավոր կլինի նկատելիորեն կենտրոնացնել և միօրինակ դարձնել հարկային հարաբերություններ կարգավորող բազմաթիվ իրավական ակտերը, ինչի արդյունքում հարկային օրենսդրությունը կդառնա առավել համակարգված, իսկ դրանից օգտվելը՝ դյուրին: Մասնավորապես, առաջարկվում է հարկային օրենսգրքի շրջանակներում կարգավորել ինչպես հարկ վճարողների հարկային հաշվառման, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկ վճարողների սպասարկման ու նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման, հարկային պարտավորությունների ու գերավճարների հաշվառման, այնպես էլ հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային հարցերով վարչական վարույթի իրականացման, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառության ու հարկային ծառայողների գործողությունների և անգործության բողոքարկման հետ կապված հարաբերությունները:

¹ http://www.armstat.am/file/article/finansner_2015_1.pdf

ՅԱՐԿԱՅԻՆ ԲԵՈՒ ԳՆԱՐԱՏՄԱՆ ՅԱՐՑԻ ԾՈՒՐԶ

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, տ.գ.թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ Ս. Քոյքանյանի անվան տնտեսագիտության

ինստիտուտի ավագ գիտաշխատող

Յամառուտագիր

Հարկային բեռի գնահատումը կարևորվում է ուղղակի և անուղղակի հարկերի տեսանկյուններից, քանի որ դրանք ազդում են տնտեսական ակտիվության վրա: Իհարկե, առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել և իմանալ հարկային համակարգում գոյություն ունեցող թերություններն ու բացթողումները, որոնք կաշկանդում են վերջիններիս օպտիմալ հարաբերակցությանը, քանի որ հարկային քաղաքականության անկայունությունը, ինչպես նաև հարկային օրենքներում հաճախակի փոփոխությունները, բացասաբար են ազդում սոցիալական անապահով խավի կենսամակարդակի վրա:

Բանալի բառեր. Հարկային բեռ, հարկային եկամուտներ, տնտեսվարող սուբյեկտ, հարկաբուժետային քաղաքականություն, բնակչության կենսամակարդակ, հարկային համակարգ:

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ НАЛОГОВОГО БРЕМЕНИ

КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН, к.э.н

старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Оценка налогового бремени важна с точки зрения прямых и косвенных налогов, так как они влияют на экономическую активность. Конечно, в первую очередь необходимо выявить и обосновать существующие в налоговой системе недостатки и упущения, которые сдерживают их оптимальное соотношение, поскольку нестабильность налоговой политики, а также частые изменения налоговых законов негативно влияют на уровень жизни социально необеспеченных слоев населения.

Ключевые слова: налоговая нагрузка, налоговые доходы, хозяйствующий субъект, налогово-бюджетная политика, уровень жизни населения, налоговая система.

ON THE ISSUE OF ESTIMATING THE TAX BURDEN

KRISTINE YURI BAGHDASARYAN, Ph.D. in Economics

Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Estimating the tax burden is crucial from the point of view of direct and indirect taxes, since they affect the economic activity. Certainly, first, it is required to identify and justify the current pitfalls and shortcomings of the tax system that suppresses the optimal ratio of the direct taxes to indirect taxes, since the instability of tax policy and frequent changes in the tax-related laws negatively affect the standards of living of the socially vulnerable people.

Keywords: Tax burden, tax revenue, legal entity, fiscal policy, standards of living of the population, tax system